ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ-ՏԵՍՈՒՉ ՀՄԱՅԱԿ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ գործառույթները՝

1. ուսումնասիրել եմ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող վարչական և վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների հարուցման, լսումների անցկացման, գործի քննության մեթոդական ուղեցույցները,
2. ուսումնասիրել եմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ուղեցույցը, ծանոթացել եմ աշխատանքային իրավունքի բնագավառում (բացառությամբ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի) ռիսկի վրա հիմնված ստուգման թիվ 5.1 ստուգաթերթին,
3. մասնակցել եմ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներին,
4. մասնակցել եմ ՀՀ կառավարության կողմից հաստատված ստուգաթերթերով նախատեսված ստուգումների և վարչական վարույթների իրականացման աշխատանքներին,
5. ուսումնասիրել եմ աշխատանքային պայմանագրերի կնքման և (կամ) լուծման կարգի պահպանման, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական

ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26, 0046
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

ակտի կամ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությամբ աշխատանքների (անօրինական աշխատանք) դեպքերի հայտնաբերման, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկման ու վճարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներին,

6. մասնակցել եմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության ոլորտում հանրությունից ստացվող դիմում-բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու դրույթներին, մասնակցել եմ պատասխան գրությունների կազմման աշխատանքներին,

7. մասնակցել եմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի տեսուչների կազմակերպած իրազեկման սեմինարներին,

8. իրականացրել եմ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի կազմման աշխատանքներ:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ **ՔՆՔՈՒԾ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները գնահատում եմ՝ լավ:

ՊԵՏ-ՏԵՍՈՒՉ ՀՄԱՅԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ

13.10.2026թ

ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Արաբկիրյան 26, 0046
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107